կաթնածառ մ՚ալ Clusia galactodendro, հրաշալի է ասոր կաթը համով և շատ ընտիր. միանգամայն և նշանաւոր է իւր բժշկական յատկութեամբք։

Գվարան սաստիկ թանչից ցաւէ բռնուելով քիչ առենէն մահուան դուռը կը հասնի, իրեն կու տան այս կաթէն, երբեք ժամ կ՚անցնի և ահա բոլորովին կ՚առողջանայ, կը կազդուրի. առաւօտեան դէմ հոգեվարք էր և կէսօրը անցած էր իւր մահաբեր հիւանդութիւնը։ Ըստ երևելի բժշկաց և տարրաբանից սոյն կաթը իւր մէջ կը բովանդակէ ռետնային գոյացութիւններ, որոնք շատ օգտակար դեղեր են աղեաց բորբոքման, շուտով կ՚անցնեն անոնց ջերմութիւնը, ասոր և Գվարան կրնար ազատիլ մահուանէ։

Վենեցուելայի բնակիչք շատ անգամ ըսած են բնապատում քննչաց, որ երբ իրենք հիւանդութիւն ունենան կը խմեն այս կաթը, որ քիչ ժամանակէն կ՚անցնէ իրենց տկարութիւնը։

## ՄԵԾԱՄԵԾ ԱՅՑԵԼՈՒԹԻ Ս. ՂԱԶԱՐ

Մայիս ամսոյն 11ին այցելութեան եկաւ վանացս՝ Սերբիոյ նախկին Միլան թագաւորն հանդերձ իշխանազուն անձերով, որք են՝ Դքսուհիք, կոմս և կոմսուհիք. ամենայն կերպով պարտուպատշաճ և սիրալիր ընդունելութիւն եղաւ. այցելութիւնը գրեթէ ժամ ու կէսու չափ տեւեց՝ յետ որոյ քաղցր համակրութեամբ մեկնեցաւ։

Նոյն օրն այցելութեան եկաւ նաև Փրեդերիկ–Կարլ Հոհենլոհէ իշխանն, իշխանուհիներով, որք նոյնպէս բաւական ժամանակ վանքի գլխաւոր տեղերը այցելելով, մեկնեցան ի Վենետիկ, իրենց հայրենիքը վերադառնալու համար։

## ԱԶԴ

1. — Որ և իցէ գիրք՝ թէ՛ հեղինակութիւն և թէ թարգմանութիւն, որ խմբագրութեանս ղրկուի, ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ երկամսեայ պրակաց մէջ պիտի ծանուցուի Նոր հրատարակութիւնք խորագրով։

2. — Այն հեղինակներն և կամ թարգմանիչք՝ որոնք փոխանակութեամբ իրենց գրոց կը ցանկան (նոյնպէս) մեր տպած գրքերէն ունենալ, պէտք են առաջուց իմացնել մեզ՝ թէ ի՛նչ գիրք է յղելիքը, և ի՛նչ անոր փոխարէն պահանջելիքը։

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

*Շնորհակալութեամբ ստացանք հետևեալ գրքերը.*

1. — ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՔ XIX–երրորդ դարում. Մասն Ա. (1800–1832). Մասն Բ կաթողիկոսութիւն Տ. Յովհաննէս (1831–

digitised by A.R.A.R.@

1842). *աշխատասիրեաց Աղեքսանդր Դ. Երիցեան. Թիֆլիզ տպրն. Մ. Մարտիրոսեանի և ընկ. Միքայէլեան փողոց, տուն* N°. 81. 1895.

2. — Լեռնաստանի եւ Արեւմտեան-Հարաւային Ռուսիայի Հայերը. *գրեց Ի. Ա. Լինեւիչենկօ, Թրգմ. Խ. Ցովհաննիսեանց, Տպ. ի Մոսկուա. տպարան Գ. Բարխուդարեան*, 1894.

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Հին հաւատք Հայոց* . . . . 241

*Աբուսալհ Հայ արաբագիր պատմիչ եկեղեցեաց և վանորէից եգիպտոսի* 250

*Ուղեւորութիւն Ռանտրի յարեւելս* . 255
*Պամփիլեան օրինակ Ս. Գրոց* . . 260

*Սրբախօսութիւն արեւելեան եկեղեցեաց և առանձինն հայ մատենագրութեան մէջ.* . . . . . 264
Ի *Տօնի ամենասուրբ Երրորդութեան (շարական).* . . . . 268
*Նաւուղիղն (բանաստեղծ. Թ. Թէրզեան).* . . . . . 270
*Հսկումն (բանաստեղծ. Ց. Ջանէլլա).* 275
*Դեռահասակ քերթողի առ կեանս ողջոյն հրաժեշտի* . . . 277
*Երջանկութիւն* . . . . 278
*Հայ օրագրաց լեզուն (Թղթակցութիւն).* . . . . . 284
*Կաթնածառ* . . . . 286
*Մեծամեծ այցելուք ի Ս. Ղազար.* 287
*Ազդ* . . . . . . 287

## SOMMAIRE

L'ancienne foi des Arméniens, ou la religion Arménienne . . . 241
Abousalih, auteur arménien d'histoire des Églises et des couvents d'Égypte, écrit en arabe. . . 250
À travers l'Arménie russe . . 255
Codex de Pamphile de l'Écriture sainte . . . . . 260
L'Hagiographie dans les Églises d'Orient, et dans la littérature arménienne . . . . 264
Pour la fête de la Sainte Trinité (Hymne) . . . . 268
Le pilote (poésie. Th. Therzian). 270
La veille . . . . . . 275
Adieu à la vie du jeune poète . 277
Félicité . . . . . . 278
La Langue des journaux arméniens (Correspondance). . . . 284
Galactodendron . . . . 286
Les principales visites à S. Lazare. 287
Avis . . . . . . 287

digitised by A.R.A.R.@